



Australian Government

COVID-19
VACCINATION

Տեղեկատվություն AstraZeneca-ի վերաբերյալ

AstraZeneca պատվաստանյութ

Կապ կա AstraZeneca պատվաստանյութի և շատ հազվագյուտ հիվանդության միջև, որը ներառում է արյան մակարդում և ցածր արյան թրոմբոցիտների մակարդակներ: Հիվանդությունը կոչվում է թրոմբոց թրոմբոցիտոպենիայի համախտանիշով (TTS):

COVID-19-ի դեմ պատվաստումը խորհուրդ է տրվում բոլոր մեծահասակների համար: Pfizer պատվաստանյութը նախընտրելի պատվաստանյութն է COVID-19-ի դեմ 60 տարեկանից ցածր տարիքի մեծահասակների համար: Սակայն մինչև 60 տարեկան մեծահասակները կարող են ընտրել ստանալ AstraZeneca պատվաստանյութը: Խոսք էր բժշկի հետ, որպեսզի ձեր որոշումը կայացնեք:

AstraZeneca պատվաստանյութը տրվելու է 60 տարեկան և բարձր տարիքի մարդկանց:

Ինչ է թրոմբոց թրոմբոցիտոպենիայի համախտանիշով (որը կոչվում է TTS)

Թրոմբոց նշանակում է արյան մակարդում:

Թրոմբոցիտոպենիա նշանակում է արյան ցածր թրոմբոցիտների մակարդակներ:

TTS-ը AstraZeneca պատվաստանյութի շատ հազվադեպ, հավանական կողմնակի ազդեցություն է: Եթե դա տեղի ունենա, դա կարող է լինել լուրջ և կարող է հանգեցնել հաշմանդամության կամ մահվան: TTS-ը առաջացնում է արյան թրոմբ, որը կարող է լինել մարմնի տարբեր մասերում: Այն կարող է նաև առաջացնել ցածր արյան թրոմբոցիտների մակարդակներ, որը կարող է հանգեցնել արյունահոսության: Որևէ կապ չկա Pfizer պատվաստանյութի և TTS-ի միջև:

Ե՞րբ է TTS-ը տեղի ունենում

TTS-ի տեղեկացված դեպքերը տեղի են ունեցել պատվաստումից հետո 4-ից 42 օրվա ընթացքում, սովորաբար AstraZeneca պատվաստանյութի առաջին դեղաչափից հետո:

Որքա՞ն տարածված է TTS-ը

TTS-ը հազվադեպ է: Ներկայումս գնահատվում է, որ այն ազդում է 1-2 մարդու վրա՝ 100,000 մարկանցից, ովքեր ստանում են COVID-19-ի դեմ AstraZeneca պատվաստանյութը: Բայց 60 տարեկանից ցածր տարիքի մարդկանց համար, տեմպը գնահատվում է բարձր,

մոտավորապես պատահում է 2-3 մարդու մոտ 100,000 մարկանցից: Այս գնահատականները կթարմացվեն, երբ ավելի շատ տեղեկատվություն հասանելի դառնա:

Արդյո՞ք որևէ խումբ TTS-ի ավելի ռիսկի տակ է

TTS-ը կարծես ավելի տարածված է երիտասարդ մեծահասակների մոտ, թեև այն արդեն գրանցվել է ավելի տարեց մեծահասակների մոտ: Մենք չգիտենք, թե արդյոք կան նախապես գոյություն ունեցող հիվանդություններ, որոնք կարող են նպաստել արյան մակարդմանը: Հետազոտողները ուսումնասիրում են այն:

Որո՞նք են TTS-ի ախտանիշները

TTS-ը կարող է առաջացնել հետևյալ ախտանիշներից որոշ մասը.

- ծանր շարունակվող գլխացավ, որը.
 - առաջանում է պատվաստումից առնվազն 2 օր *հետո*
 - չի բարելավվում պարզ ցավազրկիչ օգտագործելուց հետո
 - կարող է ավելի վատանալ պառկած վիճակում
- սրտխառնոց և փսխում
- աղոտ տեսողություն
- խոսքի դժվարություն
- քնկոտություն
- ցնցումներ
- շնչառության դժվարություն
- կրծքավանդակի ցավ
- ձեր ոտքի այտուցվածություն
- ստամոքսի շարունակվող ցավ
- ներարկման վայրից հեռու արյան փոքր բծեր մաշկի տակ:

Եթե դուք կամ մեկ այլ անձ ունենա այս լուրջ կողմնակի ազդեցություններից որևէ մեկը COVID-19-ի դեմ պատվաստում ստանալուց հետո, դուք պետք է անմիջապես զանգահարեք 000:

Արդյո՞ք AstraZeneca պատվաստանյութի օգուտները ավելի շատ են քան ռիսկերը

Այո պատվաստանյութի օգուտները ավելի մեծ են, քան ռիսկերը, հատկապես տարեցների համար, ովքեր ունեն ավելի բարձր ռիսկ հիվանդանալու COVID-19 հիվանդությամբ:

Ինչ անել, եթե դուք 60 տարեկանից ցածր եք և գրանցվել եք ստանալու AstraZeneca-ի ձեր առաջին դեղաչափը

Եթե դուք գրանցվել եք ստանալու AstraZeneca պատվաստանյութի ձեր առաջին դեղաչափը և դուք 60 տարեկանից ցածր եք, խոսեք ձեր բժշկի հետ: Նրանք կօգնեն ձեզ որոշել, թե արդյոք պետք է ստանալ պատվաստանյութը:

Ի՞նչ անել, եթե դուք ստացել եք AstraZeneca-ի ձեր առաջին դեղաչափը և ժամանակն է ստանալ ձեր երկրորդ դեղաչափը

TTS-ի գրեթե բոլոր հաղորդված դեպքերը տեղի են ունեցել COVID-19-ի դեմ AstraZeneca պատվաստանյութի առաջին դեղաչափից հետո: Եթե դուք չեք ունեցել ծանր կողմնակի բարդություններ AstraZeneca պատվաստանյութի ձեր առաջին դեղաչափից հետո, դուք կարող եք վստահորեն ստանալ ձեր երկրորդ դեղաչափը, նույնիսկ եթե դուք 60 տարեկանից ցածր եք:

Արդյո՞ք AstraZeneca պատվաստանյութը անվտանգ է այն մարդկանց համար, ովքեր ունեցել են արյան թրոմբ անցյալում

Եթե դուք ունեցել եք այլ տեսակի արյան թրոմբներ անցյալում, կամ արյան թրոմբի առաջացման վտանգի տակ եք, դուք դեռ կարող եք ստանալ AstraZeneca պատվաստանյութը: Որևէ ապացույց չկա, որ նախկինում ունեցած արյան թրոմբ մեծացնում է TTS-ի ռիսկը AstraZeneca պատվաստանյութից հետո:

Լրացուցիչ տեղեկատվության համար

Եթե հարցեր ունեք AstraZeneca պատվաստանյութի մասին, խոսեք ձեր բժշկի հետ, այցելեք www.health.gov.au/covid19-vaccines-languages կայքը կամ զանգահարեք Ազգային կորոնավիրուսի օգնական գիծ 1800 020 080 հեռախոսահամարով: Թարգմանչական ծառայությունների համար, զանգահարեք 131 450 հեռախոսահամարով: